ՎԱՀԱՆ - ՏԵՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1839թ., Երևանում, տոհմական ազնվականի ընտանիքում: Ավարտել է Երևանի թեմական դպրոցը (1871թ.): Երկար տարիներ ծառայել է Երևանի նահանգական վարչությունում: Պաշտոնավարել է նաև իբրև նոտար: Պետական ծառայության ընթացքում հասել է պալատական խորհրդականի աստիճանի, եղել է քաղաքային վարչության անդամ:

Քաղաքագլուխ Մ. Բունիաթյանի հիվանդության պատճառով կատարել է քաղաքագլխի պարտականությունները: Երևանի քաղաքագլուխ է ընտրվել 1896թ. հոկտեմբերին և պաշտոնավարել մինչև 1898թ. նոյեմբերը: Մահացել է 1898 թվականին: